ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԼԱԳԱ 1820» ՍՊԸ-ն ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-27/15 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1					Սեղանի համակարգիչ՝ ամբողջը մեկում, մոնոբլոկ: Աշխատասեղան համակարգիչ, որի հիմնական համակարգչային հանգույցը և էկրանը ինտեգրված են մեկ կորպուսում: Սարքը պետք է լինի նոր, չօգտագործված և արտադրական փաթեթավորմամբ: Սարքավորումը պետք է նախատեսված լինի գրասենյակային բազմախնդիր աշխատանքային կիրառման համար: Բոլոր հիմնական բաղադրիչները պետք է լինեն գործարանային ինտեգրված և համատեղելի միմյանց հետ: Էկրան.

						Էկրանի անկյունագիծ՝ առնվազն 23.8 դյույմ: Էկրանի տեխնոլոգիա՝ IPS, լայն դիտման անկյուններով և կայուն գունային վերարտադրմամբ: Բնիկ թույլատրելիություն՝ առնվազն 1920 × 1080 պիքսել: Էկրանի հարաբերակցություն՝ առնվազն 16:9: Էկրանի մակերես՝ հակափայլ (Anti-Glare): Պայծառություն՝ առնվազն 250 cd/m²: Գունային ծածկույթ՝ առնվազն 99% sRGB: Պետք է ապահովվի ցածր կապույտ լույսի արտանետման ռեժիմ՝ աչքերի լարվածությունը նվազեցնող գործառույթ: Կենտրոնական պրոցեսոր Պրոցեսորը պետք է ունենա առնվազն 14 ֆիզիկական հաշվարկային միջուկ: Հոսքերի քանակ՝ առնվազն 14: Առավելագույն տուրբո/բարձրացման հաճախականություն՝ առնվազն 5.0 GHz: L3 քեշ՝ առնվազն 24 MB: Պրոցեսորը պետք է աջակցի 64-bit հաշվարկներին: Պրոցեսորը պետք է ապահովի ժամանակակից բազմախնդիր աշխատանք՝ գրասենյակային ծրագրերի, վեբ հավելվածների, տեսաժողովների և այլ բիզնես ծրագրերի

						միաժամանակյա օգտագործման համար: Արհեստական բանականության հաշվարկային հնարավորություններ Պրոցեսորը պետք է ունենա ապարատային AI հաշվարկների համար նախատեսված առանձին/ինտեգրված հաշվարկային միավոր: AI հաշվարկային կատարողականություն՝ առնվազն 13 TOPS: AI հաշվարկային ենթահամակարգը պետք է կարողանա արագացնել համատեղելի AI գործառույթները՝ առանց բոլոր հաշվարկները բացառապես կենտրոնական պրոցեսորի վրա կատարելու: Պետք է աջակցվի օպերացիոն համակարգի և համապատասխան ծրագրային ապահովման կողմից AI հաշվարկային հնարավորությունների օգտագործումը: Գրաֆիկական համակարգ Պետք է առկա լինի ներկառուցված գրաֆիկական հաշվարկային ենթահամակարգ: Գրաֆիկական համակարգը պետք է աջակցի առնվազն Full HD

						թույլատրելիությամբ էկրանի ամբողջական աշխատանքին: Պետք է ապահովվի առնվազն մեկ արտաքին թվային էկրան միացնելու հնարավորություն: Պետք է աջակցվի ժամանակակից տեսանյութերի ապակոդավորումը և գրասենյակային մուլտիմեդիա աշխատանքը: Օպերատիվ հիշողություն Օպերատիվ հիշողության ծավալ՝ առնվազն 16 GB: Հիշողության տիպ՝ DDR5 : Հիշողության արդյունավետ հաճախականություն՝ առնվազն 5600 MT/s: Հիշողությունը պետք է լինի ընդլայնելի: Պետք է առկա լինի առնվազն 2 հիշողության բնիկ: Աջակցվող առավելագույն օպերատիվ հիշողություն՝ առնվազն 64 GB: Ներքին կուտակիչ Ներքին տվյալների պահպանման սարք՝ SSD: Տարողություն՝ առնվազն 512 GB: Տեխնոլոգիա՝ PCIe NVMe կամ ավելի բարձր կատարողականությամբ: SSD-ն պետք է տեղադրված լինի M.2 ձևաչափով կամ ավելի ժամանակակից ինտերֆեյսով: Պետք է ապահովվի ներքին պահեստավորման հետագա

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«ЛАГА 1820» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿԱՊՏ-ԷԱՃԱՊՁԲ-27/15 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1	-	-	-	-	Տեսախցիկ և աուդիո Ներկառուցված տեսախցիկ՝ առնվազն 5 MP թույլատրելիությամբ: Տեսախցիկը պետք է ապահովի տեսաժողովների և տեսազանգերի համար բավարար որակի պատկեր: Պետք է առկա լինի տեսախցիկի ֆիզիկական անջատման կամ գաղտնիության ապահովման մեխանիզմ: Ներկառուցված առնվազն երկակի միկրոֆոնների համակարգ: Միկրոֆոնային համակարգը պետք է ապահովի ձայնի ընդունում տեսաժողովների և ձայնային հաղորդակցության ժամանակ: Ներկառուցված ստերեո բարձրախոսներ՝ ընդհանուր ընդլայնման հնարավորություն՝ առնվազն մեկ լրացուցիչ M.2 բնիկով: Ցանցային միացումներ Լարային ցանցային միացում՝ առնվազն 1 Gbps Ethernet: Միակցիչ՝ RJ-45: Անլար ցանցային կապ՝ առնվազն Wi-Fi 6E մակարդակի կամ ավելի բարձր: Wi-Fi կապը պետք է ապահովի առնվազն 2×2 MIMO բազմաալեհավաքային տեխնոլոգիա: Bluetooth՝ առնվազն 5.3 կամ ավելի նոր տարբերակ:

						առմամբ առնվազն 4 W հզորությամբ: Պետք է առկա լինի 3.5 մմ համակցված աուդիո մուտք/ելք: USB և արտաքին միացումներ Պետք է ապահովված լինեն առնվազն հետևյալ միացումները. առնվազն 1 × USB Type-A, տվյալների փոխանցման առնվազն 10 Gbps արագությամբ, առնվազն 1 × USB Type-C, տվյալների փոխանցման առնվազն 20 Gbps արագությամբ, USB Type-C պորտը պետք է ապահովի առնվազն 15 W հզորությամբ արտաքին սարքերի սնուցման հնարավորություն, առնվազն 1 × HDMI մուտք՝ արտաքին տեսաազդանշանի աղբյուրի միացման համար, առնվազն 1 × HDMI ելք՝ արտաքին մոնիտոր/էկրան միացնելու համար, առնվազն 1 × RJ-45 Ethernet, առնվազն 1 × 3.5 mm աուդիո միակցիչ: Օպերացիոն համակարգ. Նախապես տեղադրված օպերացիոն համակարգ՝ Windows 11 Pro 64-bit: Օպերացիոն համակարգը պետք է ապահովի կազմակերպության կենտրոնացված կառավարման, օգտագործողների և

						անվտանգության քաղաքականությունների կիրառման հնարավորություն: Պետք է աջակցվի ժամանակակից ապարատային վիրտուալիզացիան և անվտանգ բեռնման մեխանիզմները: Անվտանգություն և կառավարելիություն Պետք է առկա լինի ապարատային մակարդակի անվտանգության մեխանիզմ՝ գաղտնագրման բանալիների անվտանգ պահպանման համար: Պետք է աջակցվի անվտանգ բեռնման (Secure Boot) մեխանիզմ: Պետք է աջակցվի firmware/BIOS մակարդակի պաշտպանություն չարտոնված փոփոխություններից: Պետք է ապահովվի համակարգչի կենտրոնացված կառավարման հնարավորություն՝ կազմակերպության SS ենթակառուցվածքում կիրառելու համար: Պետք է հնարավոր լինի հեռավար ախտորոշել և կառավարել սարքի հիմնական ապարատային բաղադրիչները՝ համապատասխան կառավարման ենթակառուցվածքի առկայության դեպքում: Սնուցում. Սարքը պետք է համալրված լինի

						տվյալ կոնֆիգուրացիային համապատասխան գործարանային սնուցման համակարգով: Սնուցման համակարգը պետք է ապահովի սարքի կայուն և անվտանգ աշխատանքը առավելագույն թույլատրելի բեռնվածության պայմաններում: Պետք է ապահովվի 100–240 V AC էլեկտրական ցանցերի հետ համատեղելիություն: Ստեղնաշար և մկնիկ . Սարքը պետք է համալրված լինի համապատասխան ստեղնաշարով: Ստեղնաշարը պետք է լինի USB կամ անլար՝ արտադրողի ստանդարտ մատակարարման շրջանակում: Սարքը պետք է համալրված լինի համապատասխան համակարգչային մկնիկով: Մկնիկը պետք է լինի USB կամ անլար՝ արտադրողի ստանդարտ մատակարարման շրջանակում: Իրանը և կառուցվածք . Համակարգիչը պետք է ունենա All-in-One կառուցվածք՝ նվազագույնի հասցնելով առանձին համակարգային բլոկի և մալուխների անհրաժեշտությունը: Էկրանի և համակարգչային հանգույցի կառուցվածքը պետք է

						լինի գործարանային ինտեգրված: Պետք է ապահովվի աշխատասեղանի վրա կայուն տեղադրում: Պետք է ապահովվի հիմնական բաղադրիչների սպասարկման և/կամ փոխարինման հնարավորություն՝ սարքի կառուցվածքին համապատասխան: Երաշխիք և համապատասխանություն. Երաշխիքային սպասարկման ժամկետ՝ առնվազն 1 տարի: Սարքը պետք է լինի նոր և չօգտագործված: Սարքը պետք է համապատասխանի տվյալ տեսակի սարքավորումների համար կիրառելի անվտանգության և էլեկտրամագնիսական համատեղելիության պահանջներին: Մատակարարը պետք է տրամադրի սարքի սերիական համարը և երաշխիքային փաստաթղթերը: Սարքավորումը պետք է մատակարարվի գործարանային ամբողջական կոմպլեկտավորմամբ: Երկու արտոնագրված սերվիս-կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում, որոնց տվյալները պետք է ներկայացված լինեն արտադրողի պաշտոնական Վեբ

					կայքում: Արտադրողի կողմից նամակ հավաստագրի (MAF) տրամադրում: